ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2004թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպությունը, (այսուհետ Միություն), շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը Միության անդամների միջև չբաշխող, Միության անդամների շահերի ընդհանրության հիման վրա ստեղծված անկախ, ինքնակառավարվող հասարակական միավորում է:

1.2. Միությունը կամավորության և իրավահավասարության սկզբունքներով միավորում է Հայաստանի Հանրապետության դատավորներին և Սահմանադրական դատարանի անդամներին (այսուհետ՝ դատավորներ):

1.3. Միության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է:

1.4. Միությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի վրա և ղեկավարվում է սույն կանոնադրությամբ:

1.5. Միության խորհրդանիշը պատկերում է գիրք, կշեռք, դատավորի գլխարկ և Միության կիսաշրջանաձև լրիվ անվանումը՝ հայերեն, անգլերեն գրառումներով (հավելված 1):

1.6. Միության անվանումն է՝

հայերեն «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպություն

կրճատ՝ Դատավորների միություն.

ռուսերեն "Союз Судей Республики Армения" общественная организация

կրճատ՝ "Союз Судей"

անգլերեն՝ "Association of judges of Republic of Armenia" non-governmental organization

կրճատ՝ "Association of judges"

1.7. Միությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Միության գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.8. Միությունը չի զբաղվում քաղաքական գործունեությամբ:

1.9. Միության իրավաբանական հասցեն է՝ Երևան, Գր. Լուսավորիչի 15, հեռ. 569979, 569989

2. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Միության գործունեության առարկան է՝

1) Միության անդամների մտավոր, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարումը:

2.2. Միության նպատակներն են՝

1) աջակցել ինքնիշխան, ժողովրդական, սոցիալական, իրավական պետության կայացմանն ու ամրապնդմանը.

-անկախ դատական համակարգի զարգացմանը.

- օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին.

2) նպաստել Միության անդամների և դատավորների որակավորման բարձրացմանը, ուսուցմանը, վերապատրաստմանը և աշխատանքային փորձի փոխանակմանը.

- դատավորների անկախության, անձեռնմխելիության և անվտանգության ապահովմանը, հեղինակության բարձրացմանը.

- դատարանի և դատական իշխանության անկախության ապահովմանը, ամրապնդմանը և դատարանի նկատմամբ հասարակության վստահության աճին.

- Միության անդամների հանդիպումների և հանգստի կազմակերպմանը.

3) պաշտպանել Միության անդամների օրինական շահերն ու օրենքով սահմանված իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը.

4) ապահովել դատավորի վարքագծի կանոնների պահպանումը.

5) օժանդակել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը.

6) համագործակցել դատավորների արտասահմանյան և միջազգային միությունների հետ.

7) օրենքով սահմանված կարգով հրատարակել պարբերական, իրավաբանական գրականություն, լուսաբանել Միության անդամների փորձը, դատարանի և դատական իշխանության գործունեությունը:

3. ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Միությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, առանձնացված սեփական գույք, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, մասնակցություն ունենալ գույքային շրջանառությունում և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.2. Միությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

3.3. Միությունն ունի իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, տիտղոսաթերթ և կարող է հաշվարկային ու այլ հաշիվներ բացել բանկերում:

3.4. Միությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.5. Միությունը պատասխանատվություն չի կրում Միության անդամների պարտավորությունների համար, իսկ Միության անդամները պատասխանատվություն չեն կրում Միության պարտավորությունների համար:

3.6. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Միության պարտավորությունների համար: Միությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

3.7. Միությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

1) կազմակերպել և անցկացնել ժողովներ, գիտաժողովներ, տարածքային, հանրապետական և միջազգային սեմինարներ, հանդիպումներ.

2) ներկայացնել և պաշտպանել Միության և Միության անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ հասարակական միավորումներում, դատարանում և այլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում.

3) հիմնել դատավորների մասնագիտական վերապատրաստման, կատարելագործման կենտրոն, ունենալ ակումբներ.

4) անդամակցել միջազգային հասարակական միավորումներին, հաստատել միջազգային կապեր, օտարերկրյա ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել համաձայնագրեր.

5) հիմնել տնտեսական ընկերություններ և (կամ) մասնակցել դրանց.

6) հիմնել լրատվակլսն միջոցներ.

7) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

8) իրականացնել օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3.8. Միությունը պարտավոր է՝

1) վարել Միության անդամների հաշվառում.

2) չմիջամտել Միության անդամների պաշտոնական գործունեությանը.

3) կատարել հարկային պարտավորությունները.

4) կատարել օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

4. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1. Միության գույքը գոյանում է՝

1) Միության անդամների մուտքի վճարներից և անդամավճարներից.

2) տնտեսական ընկերությունների գործունեությունից ստացված շահույթից.

3) նվիրատվուությունների.

4) ավանդներից ստացված շահույթից.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

4.2. Միության գույքի արժեքն արտացոլվում է նրա ինքնուրույն հաշվեկշռում.

4.3. Միության գույքն օգտագործվում է միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

5.ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Միության անդամ (մասնակից) կարող է լինել յուրաքանչյուր դատավոր, ով ընդունում է Միության կանոնադրությունը, ցանկանում է մասնակցել Միության գործունեությանը և վճարում է անդամավճար:

5.2. Անդամավճարը վճարվում է յուրաքանչյուր ամիս: Ամենամսյա անդամավճարների չափը սահմանում է Միության ընդհանուր ժողովը: Անդամավճարը կարող է վճարվել նաև միանվագ՝ երեք ամսվա, վեց ամսվա և մեկ տարվա հաշվարկներով:

5.3. Միությանն անդամակցելու համար գրավոր դիմում է ներկայացվում Միության խորհրդին և վճարվում մուտքի վճար: Մուտքի վճարի չափը որոշում է Միության ընդհանուր ժողովը:

5.4. Միությունը կարող է ունենալ Միության պատվավոր անդամներ.

5.5. Միության «պատվավոր անդամ» կարող է ընտրվել այն անձը, որն իր գործունեությամբ զգալի ծառայություններ է մատուցել Միությանը:

5.6. Միության պատվավոր անդամից անդամավճար չի գանձվում:

5.7. Միությսն անդամակցությունը դադարում է՝

1) Միության անդամի դիմումի համաձայն.

2) դատավորի լիազորությունների դադարեցմամբ:

5.8. Միության անդամի թոշակի անցնելուց հետո նրա դիմումի համաձայն՝ կարող է պահպանվել նրա անդամակցությունը և նա կարող է վճարել անդամավճար՝ հիսուն տոկոսի չափով:

6.ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Միության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Միության կառավարման մարմիններում.

2) մասնակցել Միության խորհրդի աշխատանքներին՝ խորհրդակցական իրավունքով.

3) դիմել ընդհանուր ժողովին և Միության խորհրդին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար.

4) Միության կառավարման մարմիններին ներկայացնել դիմումներ և առաջարկություններ.

5) մասնակցել Միության միջոցառումներին.

6) ցանկացած ժամանակ դուրս գալ Միությունից.

7) բողոքարկել Միության ղեկավար մարմինների որոշումներն ըստ վերադասության կամ դատարան՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

8) իրականացնել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

6.2. Միության անդամը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և Միության որոշումները.

2) վճարել անդամավճար.

3) պահպանել դատավորի վարքագծի կանոնները.

4) մասնակցել Միության աշխատանքներին.

5) բարձր պահել դատարանի, դատավորի և Միության հեղինակությունը.

6) կատարել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

7. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Միության կառավարման մարմիններն են՝

1) Միության անդամների (մասնակիցների) ընդհանուր ժողովը.

2) Միության խորհուրդը.

3) Միության նախագահը և փոխնախագահները:

7.2. Միության գործունեության վերահսկողություն իրականացնող մարմինը Միության վերահսկիչ հանձնաժողովն է:

7.3. Միության կառավարման մարմիններում անդամները չեն վարձատրվում և իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

7.4. Միության ընդհանուր ժողովը՝

1) Միության կառավարման բարձրագույն մարմինը Միության անդամների ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ Միության ժողով).

2) Միության ժողովը գումարվում է Միության խորհրդի կողմից անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ.

3) անհրաժեշտության դեպքում Միության ժողով կարող է գումարվել վերահսկիչ հանձնաժողովի և Միության անդամների 1/3 (մեկ երրորդի) առաջարկությամբ.

4) Միության տարեկան ժողովում քննարկվում են Միության խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները: Անհրաժեշտության դեպքում քննարկվում են այլ հարցեր.

5) Միության ժողովը ղեկավարում է Միության նախագահը կամ փոխնախագահներից մեկը.

6) Միության ժողովի արձանագրությունը կազմում է ժողովի քարտուղարը: Ժողովի քարտուղարն ընտրվում է ժողովում.

7) Միության ժողովի արձանագրությունն ստորագրում են նախագահը և քարտուղարը.

8) Միության ժողովն ընտրում է ձայներ հաշվող ժամանակավոր հանձնաժողով:

Հանձնաժողովի ընտրման կարգը և թվական կազմը որոշում է ժողովը: Ձայներ հաշվող ժամանակավոր հանձնաժողովն իր կողմից ընտրում է նախագահ.

9) ձայներ հաշվող հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել Միության կառավարման մարմիններում.

10) ձայներ հաշվող ժամանակավոր հանձնաժողովը քվեարկության արդյունքների մասին կազմում է արձանագրություն: Հանձնաժողովի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները.

11) ձայներ հաշվող հանձնաժողովի նախագահն ընտրությունների արդյունքները ներկայացնում է ժողովի հաստատմանը.

12) Միության ժողով գումարելու և քննարկվող օրակարգի մասին Միության անդամները տեղեկացվում են ժողովի հրավիրման օրվանից առնվազն 15 օր առաջ:

7.5. Միության ժողովի լիազորությունները.

Միության ժողովը՝

1) հաստատում է ժողովի օրակարգը.

2) ընդունում, փոփոխում և լրացնում է Միության կանոնադրությունը.

3) ընտրում է Միության նախագահ, փոխնախագահներ, խորհուրդ և վերահսկիչ հանձնաժողով.

4) հաստատում է խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները.

5) հաստատում է Միության խորհրդանիշը.

6) դադարեցնում է Միության նախագահի, փոխնախագահների, խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի կամ դրանց անդամների լիազորությունները.

7) սահմանում է մուտքի վճարի և ամենամսյա անդամավճարի չափը.

8) Միության խորհրդի առաջարկությամբ լուծում է անդամի Միությանն անդամակցության դադարեցման հարցը.

9) հաստատում և փոփոխում է դատավորի վարքագծի կանոնները.

10) հաստատում է ձայներ հաշվող ժամանակավոր հանձնաժողովի ներկայացված քվեարկության արդյունքները.

11) լուծարում և վերակազմակերպում է Միությունը.

12) քննարկում է սույն կանոնադրությամբ նախատեսված և Միության գործունեության հետ կապված այլ հարցեր:

7.6. Միության ժողովն իրավազոր է Միության անդամների 2/3 (երկու երրորդի) մասնակցության դեպքում:

7.7. Միությունը լուծարելու, կանոնադրությունը փոփոխելու կամ լրացնելու վերաբերյալ որոշումներն ընդունվում են ժողովում՝ Միության բոլոր անդամների ձայների 2/3 (երկու երրորդով): Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են Միության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.8. Ընդհանուր ժողովում Միության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Միության ժողովում քվեարկության փակ կամ բաց կարգը որոշում է ժողովը:

7.9. Միության խորհուրդը՝

1) Միության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ընտրվում փակ գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարի ժամանակով.

2) խորհրդի թվական կազմը որոշում է Միության ընդհանուր ժողովը: Խորհրդի կազմում ընտրված են համարվում այն թեկնածուները, որոնք ստացել են Միության բոլոր անդամների ձայների մեծամասնությունը.

3) Միության նախագահը և փոխնախագահները Միության խորհրդի անդամներ են.

4) խորհրդի աշխատանքներն իրականացվում են նիստերի ձևով.

5) խորհրդի նիստերը գումարվում են անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ.

6) անհրաժեշտության դեպքում խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի անդամների 1/3 (մեկ երրորդի), Միության նախագահի, փոխնախագահների, վերահսկիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ Միության առնվազն 10 (տասը) անդամի պահանջով:

7) Միության խորհրդի նիստ գումարելու և քննարկվող օրակարգի մասին խորհրդի

անդամներին տեղեկացվում է նիստի հրավիրման օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ:

7.10. Միության խորհրդի լիազորությունները.

Միության խորհուրդը՝

1) սահմանում է իր գործունեության կարգը.

2) կատարում է աշխատանքի բաշխում Միության խորհրդի անդամների միջև.

3) հաստատում է ընդհանուր ժողովին ներկայացվող Միության խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները և դրանք զեկուցողներին.

4) ապահովում է Միության կանոնադրական պահանջների կատարումը.

5) ներկայացնում է Միության ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը.

6) ընդունում է Միության անդամ, ընտրում է Միության «պատվավոր անդամ», առաջարկություններ է ներկայացնում ժողովին Միության անդամակցության դադարեցման վերաբերյալ.

7) նշանակում և ազատում է Միության գործադիր տնօրենին.

8) հաստատում է Միության աշխատակազմի հաստիքացուցակը.

9) սահմանում է Միության աշխատակազմի հաստիքային աշխատողների աշխատավարձը.

10) առաջարկություններ է ներկայացնում սույն կանոնադրությունում, ՀՀ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ.

11) իրավասու պետական մարմիններին ներկայացնում է առաջարկություններ օրենքների կատարելագործման վերաբերյալ.

12) քննարկում է Միության անդամների դիմումները և առաջարկությունները.

13) լուծում է Միության անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը վերաբերող հարցեր.

14) Միության կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար կազմում է աշխատանքային խմբեր.

15) հաստաստում է Միության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը և վերահսկիչ հանձնաժողովի իրավասությունները.

16) որոշում է ընդունում մեկ միլիոն դրամից ավելի արժողությամբ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ.

17) որոշում է ընդհանուր ժողովի անցկացման տեղը, օրը և ժամը.

18) սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում ընդունում է այլ որոշումներ:

7.11. Միության խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների 2/3 (երկու երրորդի) մասնակցության դեպքում:

7.12. Միության խորհրդի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ

մեծամասնությամբ:

7.13. Միության նախագահը՝

1) Միության նախուսգահը միաժամանակ Միության խորհրդի նախագահն է.

2) Միության նախագահն ընտրվում է երկու տարի ժամանակով.

3) Միության նախագահի թեկնածուներն առաջադրվում և գրանցվում են ընդհանուր ժողովում: Քվեաթերթիկներ կազմելու կարգը ուսիմանուում է ձայների հաշվող հանձնաժողովը: Առաջադրված թեկնածուն կարող է հրաժարվել.

4) Միության նախագահի ընտրությունները կատարվում են փակ քվեարկությամբ.

5) Ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է Միության մասնակիցների ձայների մեծամասնությունը.

6) եթե քվեարկվել է երկուսից ւսվելի թեկնածու և ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ ձայներ, ապա նույն օրը անց է կացվում երկրորդ փուլ, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Միության նախագահի թեկնածուն ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ չստանալու դեպքում անցկացվում է նախագահի նոր ընտրություն՝ այլ թեկնածուների առուսջադրմամբ.

7) Միության նախագահն իր պաշտոնն ստանձնում է նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը: Արտահերթ ընտրությունների դեպքում Միության նախագահը պաշտոնն ստւսնձնում է ընտրվելուց հետո 10-օրյա ժամկետում:

7.14. Միության նախագւսհի լիւսզորությունները.

Միության նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Միության և խորհրդի աշխատանքները.

2) հրավիրում է Միության ընդհանուր ժողով և խորհրդի նիստ.

3) համակարգում է փոխնախագահների, խորհրդի անդամների, գործադիր տնօրենի աշխատանքները.

4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների աշխատավարձի չափը.

5) ստորագրում է Միության ժողովի և խորհրդի որոշումները.

6) առանց լիազորագրի ներկայացնում է Միությունն այլ մարմինների հետ հարաբերություններում.

7) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.15. Միության նախագահի բացակայության ժամանակ նրա լիազորություններն իրականացնում են Միության փոխնախագահները՝ նախագահի հանձնարարությամբ:

7.16. Միության փոխնախագահներն ընտրվում են սույն կանոնադրության 7.13. կետի 2-6 ենթակետերով նախատեսված կարգով:

7.17. Միության փոխնախագահների լիազորությունները.

Միության փոխնախագահները՝

1) Միության նախագահի բացակայության ժամանակ նախագահի հանձնարարությամբ իրականացնում են նախագահի լիազորությունները.

2) Միության նախագահի հանձնարարությամբ ղեկավարում են Միության առանձին բնագավառների աշխատանքները.

3) կատարում են Միության նախագահի և խորհրդի այլ հանձնարարություններ:

7.18. Միության գործադիր տնօրենի լիազորությունները.

Գործադիր տնօրենը՝

1) իրականացնում է Միության ընթացիկ գործադիր ղեկավարումը.

2) Միության անունից կնքում է պայմանագրեր.

3) նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատողներին.

4) կազմակերպում է Միության աշխատակազմի աշխատանքը.

5) կազմակերպում է անդամավճարների գանձումը և հաշվառումը.

6) կազմակերպում է Միության հաշվապահական հաշվառումը, տարեկան հաշվետվությունը, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելը.

7) որոշում է ընդունում մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ.

8) իրականացնում է աշխատանքային պայմանագրով սահմանված այլ լիազորություններ:

7.19. Միության վերահսկիչ հանձնաժողովը՝

1) վերահսկիչ հանձնաժողովն ընտրվում է փակ գաղտնի քվեարկությամբ՝ երկու տարի ժամանուսկով: Վերահսկիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել Միության նուսխագահը, փոխնախագահները և խորհրդի անդամները.

2) վերահսկիչ հանձնաժողովի քանակական կազմը սահմանում է Միության ընդհանուր ժողովը: Հանձնաժողովի կազմում ընտրված են համարվում այն թեկնածուները, որոնք ստացել են Միության մասնակիցների ձայների մեծամասնությունը.

3) վերահսկիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ.

4) վերահսկիչ հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի ձևով.

5) վերահսկիչ հանձնաժողովի նիստերը հրավիրվում են անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ պակաս, քան կիսամյակը մեկ անգամ.

6) անհրաժեշտության դեպքում վերահսկիչ հանձնաժողովի նիստերը հրավիրվում են Միության խորհրդի և նախագահի կամ հանձնաժողովի նախագահի, հանձնաժողովի

անդամների 1/3-ի (մեկ երրորդի) պահանջով:

7.20. Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունները.

Վերահսկիչ հանձնաժողովը՝

1) վերահսկում է Միության ֆինանսատնտեսական գործունեությունը.

2) ապահովում է կանոնադրության պահանջների կատարումը՝ ընդհանուր ժողովի ընթացքում որոշումներ ընդունելիս կամ ընտրությունների ժամանակ.

3) վերահսկում է Միության որոշումների կատարումը.

4) ստուգում է Միության փաստաթղթերը, տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռը, դրանց վերաբերյալ Միության խորհրդին ներկայացնում է եզրակացություն.

5) Միության ընդհանուր ժողովին հաշվետվություն է ներկայացնում Միության ֆինանսական և այլ գործունեության մասին:

7.21. Վերահսկիչ հանձնաժողովի ծախսերի հատուցման կարգը սահմանում է Միության խորհուրդը:

7.22. Միության խորհրդի որոշմամբ Միության ֆինանսատնտեսական գործունեությունը վերստուգելու նպատակով կարող է կազմակերպվել հաշվեքննություն (աուդիտ):

7.23. Միության վերահսկիչ հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի ւսնդամների 2/3-ի (երկու երրորդի) մասնակցության դեպքում: Միության վերահսկիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.24. Վերահսկիչ հանձնաժողովը կարող է անհրաժեշտ փաստաթղթեր պահանջել Միության խորհրդից և տնօրենից:

7.25. Միության վերահսկիչ հանձնաժողովի նախագահը կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքը, ստորագրում հանձնաժողովի որոշումները, կարող է մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Միությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

9. ՄԻՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9.1. Միությունը կարող է լուծարվել ընդհանուր ժողովի որոշմամբ կամ դատարանի

որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և հիմքերով: Միության լուծարման դեպքում այդ մասին 5-օրյա ժամկետում հայտնվում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

9.2. Միության լուծարումը կատարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով.

9.3. Միության լուծարվելու դեպքում նրա գույքն ուղղվում է Միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե:

9.4. Միությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարեցած, պետական գրանցման պահից:

9.5. Միությունը կարող է վերակազմակերպվել ընդհանուր ժողովի որոշմամբ, կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: